



13. ՍՐԱՄԻՏ ՏՂԱՆ

Կար-չըկար մե մարթ, մե կնիկ կար. տանց մե տղա կար: Մարթը սարակ պոնեց, կնացին արտը քաղեն: Սարայքերի խացն ու-չացավ, սարայքեր էն տղային ըղրկին տուն՝ խաց պերի: Էտ էկավ տուն, խորը Հոսեցուց, խերն անթրոց թոնդրեն խանեց, թալեց դար իտև:

Տղան անթրոց տարավ, սարայքերին ասաց. — Դադան ասելլի՝ արտն անեն կարկավուղ, ուտեն:

Տանք էլ արին:

Խերն էկավ, տսավ, ասաց. — Էտ ի՞նչ եք արե:

Սարայքերն ասին. — Ախ տու անթրոց տվիր տղային, պերեց:

Խեր ջորեն չաղուն խանեց, թալեց տղայի իտևեն:

Տղան չաղուն տարավ տուն, մորն ասաց. — Դադան ասելլի, թոսև եզ մորթի:

Տղան մորթեց եզ:

Խերն եկավ ասաց կնգան. — Էտ ի՞նչ ես արե:

— Ախ տու չաղուն տվիր, լաճտ պերեց:

Խերն ուր քղակ թալեց տղայի իտևեն, տղան քղակը տարավ քրոջ տուն:

— Դադան մեռե, — ասաց, — Հարթանք:

Քուրը պաղրատուլթոն տսավ, խեծավ էչ, էկավ, խասան կես ճանբախ, քրոջ ասաց. — Տու քելի՛, ես կրկամ:

Կնաց, դայյաղ էլավ մե քարի, իչկաց՝ մե ծիավոր ի իկալի, ասաց էն ծիավորին. — Հար էս քար պոնի՛, մի՛ թող իկա, ես էթամ մե պծառ ճուր խմեմ:

Ծիավորն էկավ, քարը պոնեց:

Տղան ասաց. — Պի՛նդ պոնի, կրկա վրատ:

Էտ տղան խեծավ ծին, կնաց խասավ մե չոբանի, տսավ՝ մրուս չրկա չոբանին, ասաց. — Ի՞նչ կրտաս, ես քեզի բեղ-մրուս չինեմ:

Չոբանն ասաց. — Մե էժ կրտամ:

Մե փոս փորեց, չոբանին մտուց մեչ, մե գազ առեց էկավ, զար-

կեց չորանի իրեսին, էնենց ծակծկեց, որ հըմեն էլավ էրուն, ջանդակ խորեց խողի մեչ, վերցեց ոխճըքեր, կնաց տուն, ասաց.—Դա՛դա, էտ ոխճարը քո ցորոնի տեղ, ծին էլ՝ եզան տեղ:

Էն ծիավորն էլավ քարի տակեն, ասավ՝ քար չիկալի, էկավ, որ էտ տղային գնի, տսավ՝ մե մարթ բոռալըի. էտ չորանն էր:

Ծիավորն ասաց.—Ընչի՞ մտիր եզ էտ փոսը:

Չորանն ասաց.—Մե տղա արաց, ոխճըքերս տարավ:

Ծիավոր խանեց չորանին, էլան էկան թեխ տղան, էկան տղայի տուն, ասին.—Մեր մալեր տո՛ւ:

Տղան չայ տրեց, խման, իտեֆ ասաց.—Քի՛չ խմեք, որ չըչոեյ ծեր տակ, խե չոեյ ծեր տակ, իմ դադան կըմեռնի:

Քնան:

Տղան էլավ կչերը, հար մեկի տակ մե ըստքան ճուր լցեց: Կչեր էտ մառները զառնան, ծեռ տվին ուրենց տակ, իչկացին, որ չոիր են, էլան փախան:

Ճամբախեն մե մառն ասաց ինգերին.—Մարթ չոի ուր տակ, մարթ կըմեռնի՞:

Տառցան էկան:

Էն մեկ ուր կլոխ չառչվայեն մտուց, տղան ասաց.—Իմ խեր սպանիք, խերիք չի, էլեք էկե՞:

Էտ չորանը կլոխ իրար տվեց, որ խանի չառչվայեն, չառչվան էլավ:

Էն մեկէլ ինգերն ասաց.—Նաչը պերի՛ն:

Թողին փախան:

